

Մ Օ Ր Ս

Սօսիի շուֆին դեռ կը նըստիս դում,
 Կարծես թէ երէկ, կարծես թէ այսօր,
 Թոյլ խորութենէն մայր քու մագերուն
 Կը բըխի գէմֆդ,
 Ուրիշ աշխարհի աննապարհ առած
 Լուսնի մը հանգոյն:

Կեցած եմ իր դէմ,
 Ոտֆերուս փռշին աննապարհներու,
 Մագերուս վըրայ աստղերու մոխիր:
 Փակ են շըրթումֆներ,
 Մեռած տատրակի կոպերու նըման,
 Իր աչքերու մէջ ալ չի պըսպըզար
 Բացուող օրերու լուսաստղը ազուոր:

Բաց շըրթումֆներդ, մայր իմ սիրելի,
 Եւ պատմէ ինծի մեկնող օրերու
 Հէֆիաթն անաւարտ:
 Դուն գիւղն իմ աղուոր, երազ մը ինչպէս
 Թառած շըրթումֆին՝ անցած օրերու,
 Որու քովիկէն կը վազէր առուն
 Զուրերուն՝ առած նշխարն արեւուն:
 Տնակն իմ թափուր,
 Որու կըտուրին՝ ամէն երեկոյ,
 Կը բացուէր լուսինն վարդի պէս նըմակ:

Հեռուն կը կենան
 Լեռները խաչուած իրենց ստուերին,
 Իսկ անունց լանջին՝

Վանքն է կիսաւեր իր բեկուած խաչով,
Որ միմչեւ երէկ զանգերու բերնով
Կը խօսէր արդար իր Աստուծոյն հետ:

Մշակներն ահա դաշտերուն զըմբուխտ,
Արտերուն ոսկի,
Որոնք Աստուծոյ մեծ աչիւն առջեւ,
Կը հանդերձէին հրնձառ առ հրնձան
Բարիքն հողերուն,
Բանալով սեղան իրենց սըրտին պէս,
Անօթի եւ կուշտ մարդերուն բոլոր:

Կը մայիմ մօրս աչքերուն խոնաւ,
Անոնց ջրհորէն կը մային ինծի
Մեռելներս անթաղ,
Որոնք չմանչցան սփոփանքն հողին,
Արեւուն ներքեւ մեր այս աշխարհին:

Իսկ արիւն բուրոյ հողերուն վըրայ՝
Կը քալէր մորէն Յիսուս խաչն ուսին՝
Ոտերնով բոպիկ:

ԵՂԻՎԱՐԴ

